# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 ապրիլի 2015 թվականի N Մ - 283 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մարտի 30-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Խորեն Մարդոյանի կողմից Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հասցեով ուղարկված մակետային ինքնաթիռների (երկու տեղ, 9 կգ ընդհանուր քաշով, 1,552.35 դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 185 դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսվում է անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության Երկրապահ կամավորականների միությանը:

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2 ապրիլի 2015 թվականի N Մ-284-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի ապրիլի 1-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված Apple iMac համակարգիչները (64 հատ՝ 7 տեղ, 744 կգ ընդհանուր քաշով, 81,216 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 683,242 դրամ, «ՄԾՓ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2 ապրիլի 2015 թվականի N Մ-285-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի ապրիլի 1-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված Apple iMac համակարգիչները (50 հատ՝ 5 տեղ, 568 կգ ընդհանուր քաշով, 63,450 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 518,000 դրամ, «ՄԾՓ» ՍՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 ապրիլի 2015 թվականի N Մ-286-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի ապրիլի 1-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված համակարգչային մասերը և գրատախտակները (2 տեղ, 39 կգ ընդհանուր քաշով, 3,968.24 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 41.25 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2 ապրիլի 2015 թվականի N Մ-287-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 3**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի ապրիլի 1-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի քաղաքացի Բերջ Բերամիանի կողմից «Սիմոնյան» կրթական հիմնադրամի հասցեով ուղարկված տպիչի գլանավորված թուղթը և դեկորատիվ պարագաները (3 տեղ, 46.5 կգ ընդհանուր քաշով, 997.86 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 288 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 18-ի N 07/80-2/6299-15 և մարտի 19-ի N 06/3-3/6342-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մարտի 16-ի N 02/14/2945-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 12,938,170 դրամ արժողությամբ «Մայր Տաճարի ներքին հարդարման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2015 թվականի մարտի 3-ին կնքված N 03Շ/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Տաճարի ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 12,938,170 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«10» Մարտի 2015 թ.

### Մայր Տաճարի ներքին հարդարման աշխատանքներ
### ԾՐԱԳԻՐ

4/4

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի ներքին հարդարման աշխատանքները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 12,938,170 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, հոգևորականները, և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 մարտի 2015թ. – 10 հունիսի 2015թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի ներքին հարդարման աշխատանքները՝ 12,938,170 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Հորիզոն-95» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 00801721 , ՀՀ, Ք. Երևան, Ա. Ավետիսյան 118)՝ պայմանագիր 03Շ/015՝ կնքված 03.03.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 10 մարտի 2015թ. – 10 հունիսի 2015թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի ներքին հարդարման աշխատանքները՝ 12,938,170 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակ[illegible] Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է [illegible] Մայր [illegible] Սուրբ Էջմիածնի ճարտարապետ[illegible] բաժիններ և ՀՀ կառավարությա[illegible] ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագր[illegible] հետո [illegible] ամփոփ տեղ[illegible]ություն: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 289 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 18-ի N 07/80-2/6320-15 և մարտի 16-ի N 06/3-3/6022-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մարտի 16-ի N 02/14/2928-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 9,978,800 դրամ արժողությամբ «Մոմավառության շենքի համար օգտագործվող նյութերի լաբորատոր փորձարկում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01528652) 2015 թվականի փետրվարի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում կառուցվող մոմավառության մատուռների և դամբարանի շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի լաբորատոր փորձարկում՝ 9,978,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«10» Ապրիլի 2015 թ.

## Մոմավառության շենքի համար օգտագործվող նյութերի լաբորատոր փորձարկում

## ԾՐԱԳԻՐ

4/5

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կատարել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Մոմավառության շենքի համար օգտագործվող նյութերի լաբորատոր փորձարկումներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 9,978,800 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հոգևորականները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 մարտի 2015թ. – 01 հունիսի 2015թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Մոմավառության շենքի համար օգտագործվող նյութերի լաբորատոր փորձարկումներ `9,978,800 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 01528652 , ՀՀ, Ք. Երևան, Կորյունի 19ա)՝ պայմանագիր կնքված 02.02.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 01 մարտի 2015թ. – 01 հունիսի 2015թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Մոմավառության շենքի համար օգտագործվող նյութերի լաբորատոր փորձարկումներ՝ 9,978,800 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ճարտարապետաշինարարական ֆինանսական բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 290 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 17-ի N 07/80-2/6001-15 և մարտի 16-ի N 06/18-4/6051-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված պարաֆինի (38,440 կգ ընդհանուր քաշով, 67,212.8 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է ծիսական մոմի արտադրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 291 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 17-ի N 07/80-2/6102-15 և N 06/5-1/6167-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված օդափոխության սարքավորումների (4,111 կգ ընդհանուր քաշով, 64,040.16 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել է 2,384.238 դրամ, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանի վերանորգման համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 292 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 23-ի N 07/80-2/6687-15 և մարտի 25-ի N 06/5-1/6887-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված լամինատի (26,000 կգ ընդհանուր քաշով, 73,425 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,403.800 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռի Էօրնեկյան վարժարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 293 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 30-ի N 07/80-2/7514-15 և մարտի 31-ի N 06/5-1/7617-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված օդի ներածման և արտածման համակարգերի (9 տեղ, 2,042 կգ ընդհանուր քաշով, 18,833.83 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել է 2,167,860 դրամ, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ծնակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 294 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարան)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 17-ի N 07/80-2/6206-15 և մարտի 19-ի N 06/13-4/6432-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից ձեռքբերված հետերոցիկլիկ միացությունների անջատման և հայտնաբերման համակարգը (մեկ տեղ, 141 կգ ընդհանուր քաշով, 46,760 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 1,100 եվրո «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող 2014-2015 թվականների զարգացման» ծրագրի մասին (1-ին փուլ)» N Մ-1293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 295 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարան)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N 07/80-2/7316-15 և մարտի 27-ի N 06/18-4/7288-15 եզրակացությունները և հաշվի առնելով «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի 2015 թվականի մարտի 30-ի N 04-158 գրությունը,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող 2014-2015 թվականների զարգացման» ծրագրի մասին (1-ին փուլ)» N Մ-1293-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից ձեռք բերված տեսագրող զոնդային մանրադիտակը (մեկ հատ, 5,992,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
ռեկտոր Ա.Ռ. Դարբինյանի կողմից
« 30 » մարտի 2015թ.

## Հայ-Ռուսական Համալսարանի 2014-2015 թվականների զարգացման ծրագիր (1 փուլ)

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակներն են՝<br>• Ժամանակակից գիտական ուղղությունների ու նորարարական մտքի զարգացումն ու Հայաստանում գիտական ազգային ռեսուրսի ստեղծումն ու ընդլայնումը:<br>• Հայաստանում բնագիտական ուղղությունների զարգացումը, այդ ոլորտում գիտական ներուժի մեծացումը:<br>• ՀՀ գիտության ինտեգրումը համաշխարհային գիտական և հետազոտական հանրությանը և միջազգային մակարդակում նշանակության բարձրացումը՝ ՀՌՀ և ՌԴ առաջատար գիտական կենտրոնների միջև համագործակցության միջոցով, որոնցից են Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը, «ՄԻՖԻ» միջուկային հետազոտությունների ազգային ինստիտուտը, Սանկտ-Պետերբուրգի պետական պոլիտեխնիկական համալսարանը և այլն:<br>• Հայաստանում փորձնական և կիրառական գիտության, ինչպես նաև դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի և ինովացիոն տեխնոլոգիաների զարգացումը: |

| | | |
|---|---|---|
| 2. | Ծրագրի բարենգործական որակման նպատակը | Ակնկալվում է օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարենգործը | Ռուսաստանի Դաշնության կառավարություն |
| 4. | Ծրագիրը կատարողը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան<br>ՀՀ, քաղ. Երևան, 0051, Հովսեփ Էմինի 123, ՀՎՀՀ՝ 00053474 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, ՀՀ, քաղ. Երևան 0051, Հովսեփ Էմինի 123:<br>Բնագավառը՝ կրթություն և գիտություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ունի շարունակական բնույթ: Ներկայացվող առաջին փուլի բյուջեն կազմում է 55 000 000 ՌԴ ռուբլուն համարժեք դրամ: Ծախսերի նախատեսվող ուղղություններն են.<br>- լաբորատոր սարքավորումներ – 28 742 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ.<br>- ծրագրային ապահովման միջոցներ և տեխնիկական լուծումներ – 23 258 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ.<br>- ծառայություններ և աշխատանքներ – 3 000 000 ռուբլուն համարժեք դրամ, 15/12/2014-30/06/2015թ. |
| 7. | Բարենգործություն ստացողը | Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ուսանողները, ասպիրանտները և պրոֆեսորադասախոսական անձնակազմը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 15 դեկտեմբեր 2014<br>Ծրագրի ավարտը՝ 30 հունիս 2015 |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը, ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ.-ի դեկտեմբերի 15-ից մինչև 2015թ.-ի հունիսի 30 ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>1. **Տեսացրող զոնդային մանրադիտակի գնում (ներմուծում):**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել տեսացրող զոնդային մանրադիտակի ձեռքբերման պայմանագիր: Տեսացրող զոնդային մանրադիտակի գնման նպատակով իրականացվել է շուկայի ուսումնասիրություն: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 5.992.000 ռուբլուն համարժեք դրամ: Սարքավորման ձեռքբերման նպատակով իրականցվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման ներմուծումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>2. **Ջերմային վառարանի գնում (ներմուծում):**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել ջերմային վառարանի ձեռքբերման պայմանագիր: Ջերմային վառարանի գնման նպատակով իրականացվել է շուկայի ուսումնասիրություն: Սարքավորման ձեռքբերման նպատակով իրականցվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 6.650.000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>3. **Հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումներ և համալրող սարքեր:**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և համալրող սարքերի ձեռքբերման |

| | | |
|---|---|---|
| | | պայմանագիր: Սարքավորումների ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 11.000.000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>4. **Տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների գնում:**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների ձեռքբերման պայմանագիր: Տեսա և ձայնային տեխնիկայի ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 6.400.000 ռուբլուն համարժեք դրամ: Գնումը նախատեսվում է իրականացնել մինչև 2015թ. հունիսի 30-ը:<br>5. **Այլ լաբորատոր սարքավորումներ**<br>Մինչև 2015թ.-ի փետրվարի 25-ը նախատեսվում է կնքել այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման պայմանագրեր: Այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման նպատակով իրականացվելու է միջազգային մրցակցային գնանշում: Նախատեսվում է այլ լաբորատոր սարքավորումների ձեռքբերում 16.610.000 ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր գումարի չափով:<br>6. **Այլ միջոցառումներ**<br>Նախատեսվում է իրականացնել 8.858.000 ռուբլուն համարժեք |



| | | |
|---|---|---|
| | | դրամ ընդհանուր արժեքով այլ միջոցառումներ՝ կապված համատեղ գիտահետազոտական և ուսումնական նոր ծրագրերի, էլեկտրոնային կրթական ռեսուրսների, ասինխրոն կրթական գործընթացի մշակման և իրականացման, ինչպես նաև վերոնշյալ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքի վարձատրության, գործուղման և այլ չկանխատեսված միջոցառումների հետ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. **Տեսացրող զոնդային մանրադիտակի ներմուծում:**<br>Տեսացրող զոնդային մանրադիտակը նախատեսված է մագնիսային հատկությունների ուսումնասիրության, կորերի վերլուծության, թունելային մեթոդով հետազոտությունների իրականացման համար: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 5.992.000 ռուբլուն համարժեք դրամ:<br>2. **Ջերմային վառարանի ներմուծում:**<br>Ջերմային վառարանը թույլ է տալիս իրականացնել բարձր ջերմաստիճանային (մինչև 2000°C) միջավայրի ստեղծում, ինչպես նաև այդ միջավայրում նյութերի ջերմամշակում: Սարքավորման նախահաշվային արժեքը կազմում է 6.650.000 ռուբլուն համարժեք դրամ:<br>3. **Հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և համալրող սարքերի ներմուծում:**<br>Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված, հեռահար ուսուցման համար նախատեսված սարքավորումների և համալրող սարքերի ձեռքբերումը ուղղված է միջբուհական |

| | | |
|---|---|---|
| | | զիտակրթական համագործակցության ապահովման, ինչպես նաև արտասահմանյան կրթական լավագույն փորձի և նոր մոտեցումների ներդրմանը:<br>Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում է 11.400.000 ռուբլուն համարժեք դրամ:<br>4. **Տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) կազմակերպման համար նախատեսված տեսա և ձայնային սարքավորումների ներմուծում:**<br>Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված սարքավորումները նախատեսված են ուսումնական գործընթացի շրջանակներում կազմակերպվող և իրականացվող տեսակոնֆերանսների և առցանց սեմինարների (վեբինարների) համար:<br>Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում է 6.400 000 ռուբլուն համարժեք դրամ:<br>5. **Այլ լաբորատոր սարքավորումների գնում:**<br>Հայաստանում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ՌԴ առաջատար համալսարանների հետ համատեղ մշակված և ներդրված ուսումնական և գիտական ծրագրերի ներդրման հետ կապված այլ լաբորատոր սարքավորումները պետք է ծառայեն գիտական ուսումնասիրությունների, հետազոտությունների և վերլուծությունների իրականացմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացին օժանդակելու և ուսանողներին գիտական գործընթացի մեջ ներգրավելու նպատակին: |



| | | |
|---|---|---|
| | | Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում 16.100.000 ռուբլուն համարժեք դրամ:<br>6. **Այլ միջոցառումներ:**<br>Նախատեսվում է իրականացնել 8.858.000 ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքով այլ միջոցառումներ՝ կապված համատեղ գիտահետազոտական և ուսումնական նոր ծրագրերի, էլեկտրոնային կրթական ռեսուրսների, ասինխրոն կրթական գործընթացի մշակման և իրականացման, ինչպես նաև վերոնշյալ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքի վարձատրության, գործուղման և այլ չկանխատեսված միջոցառումների հետ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ներկայացնել ընթացիկ և վերջնական ֆինանսական հաշվետվություններ ՌԴ Կրթության և գիտության նախարարություն, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 296 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1028-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

(«Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարան)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 23-ի N 07/80-2/6701-15 և N 06/5-1/6551-15 եզրակացությունները հաշվի առնելով «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի 2015 թվականի մարտի 24-ի N 04-152 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարան կողմից իրականացվող «Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման որակի բարելավման նպատակով ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազայի վերազինում» ծրագրի մասին» N Մ-1028-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի ապրիլի 30-ը:

2. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից ձեռք բերված ավտոմատ փոշեցրման մագնետրոնային սարքավորումը և մագնետրոնի փոշեցրման թիրախները (2 տեղ, 513 կգ ընդհանուր քաշով, 167,217 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 297 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1237-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 25-ի N 07/80-2/6962-15 և N 06/3-3/6884-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» ծրագրի մասին» N Մ-1237-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նյու Հորիզոն Գրուպ, Ինկ» ընկերության հայաստանյան մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 00930386) 2015 թվականի մարտի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սեմինարի մասնակիցներին հյուրընկալության և հյուրասիրության ծառայությունների մատուցում՝ 482,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 298 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-615-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 25-ի N 07/80-2/6957-15 և N 06/3-3/6886-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-615-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Նյու Հորիզոն Գրուպ, Ինկ» ընկերության հայաստանյան մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 00930386) 2015 թվականի մարտի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում սեմինարի մասնակիցներին հյուրընկալության և հյուրասիրության ծառայու-թյունների մատուցում՝ 846,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նյու Հորիզոն Գրուպ, Ինկ» ընկերության հայաստանյան մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 00930386) 2015 թվականի մարտի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սեմինարի մասնակիցներին հյուրընկալության և հյուրասիրության ծառայությունների մատուցում՝ 679,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 299 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարան)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 30-ի N 07/80-2/7369-15 և մարտի 25-ի N 06/3-3/6926-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից (ՀՎՀՀ՝ 00053474) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «2014-2015 թվականների զարգացման» ծրագրի մասին (1-ին փուլ)» N Մ-1293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍԻՄԱՐՉ ԱՍԻԱ Պտե» («SimArch Asia Pte ltd») ՍՊԸ-ի հետ (30, Սեսիլ փող., #19-08 Փրուդենշլ աշտարակ, Սինգապուր 049712, (30Cecil Street, #19-08 Prudential Tower Singapore 049712) 2015 թվականի մարտի 5-ի պայմանագրով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է «Բանկային գործունեություն» ծրագրային ապահովման ձեռքբերում՝ 3,000 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 300 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 2-ի N 07/80-2/7850-15 և N 06/3-3/7866-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի 1-ի N 02/14/3774-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 15,743,091 դրամ արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի արտաքին լուսավորության աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՊՈ-ԻՔՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06107403) 2015 թվականի մարտի 20-ին կնքված N 04Շ/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի արտաքին լուսավորության աշխատանքների իրականացում՝ 15,743,091 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«27» [illegible] 2015 թ.

## Տարածքի արտաքին լուսավորության աշխատանքներ
## Ծ Ր Ա Գ Ի Ր

Ա-4/4

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կատարել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի տարածքի արտաքին լուսավորության էլեկտրասնուցման մոնտաժային աշխատանքները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 15,743,091 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, հոգևորականները և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 ապրիլի 2015թ. – 01 հուլիսի 2015թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի տարածքի արտաքին լուսավորության էլեկտրասնուցման մոնտաժային աշխատանքները 15,743,091 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «ԱՊՈ-ԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 06107403 , ՀՀ, Ք. Արթիկ, Կամոյի 27)՝ պայմանագիր կնքված 20.03.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 01 ապրիլի 2015թ. – 01 հուլիսի 2015թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի տարածքի արտաքին լուսավորության էլեկտրասնուցման մոնտաժային աշխատանքները 15,743,091 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական [illegible] Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո [illegible] |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ-301-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N Մ-103-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի 2015 թվականի ապրիլի 1-ի N 0-142 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-103-Ա որոշմանը կից բեռի և բաշխման ցանկը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Նախագահ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

| Նկարագրություն | Արտադրող մոդել | Արտադրող երկիր | Քանակ (արկղ) | քաշ միավոր / կգ. բրուտտո | քաշ (ընդհանուր) կգ. բրուտտո | քաշ միավոր / կգ. նետտո | քաշ (ընդհանուր) կգ. նետտո | Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն ՊՈԱԿ | Նորքի "Մանկան տուն" ՊՈԱԿ | Գյումրու "Երեխաների տուն" մանկատուն ՊՈԱԿ | "Տիրամայր Հայաստան" մանկատուն | Նուբարաշենի 11 հատուկ (օժանդակ) դպրոց | Խարբերդի մասնագիտացված մանկատուն ՊՈԱԿ | Մասիսի բժշկական կենտրոն ՓԲԸ | Գյումրու ցերեկային խնամքի կենտրոն ՊՈԱԿ | Հատի արժեքը | Ընդհանուր արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անալիզատոր Ֆլուրոմետրիկ / Իմունոլոգիական / | ABBOTT IMX IMMUNO Assay | ԱՄՆ | 1 | 12.0 | 12.0 | 11.0 | 11.0 | | 1 | | | | | | | $ 6,000.00 | $ 6,000.00 |
| Անալիզատոր գլյուկոզայի | Hemocue | ԱՄՆ | 2 | 1.0 | 2.0 | 0.9 | 1.8 | | 1 | | | | 1 | | | $ 150.00 | $ 300.00 |
| Լոգարան /վաննա/ պարաֆինային Pt | PARABATH | ԱՄՆ | 1 | 3.0 | 3.0 | 2.8 | 2.8 | 1 | | | | | | | | $ 250.00 | $ 250.00 |
| Այրման զրիչներ / երկբևեռային և այլ | | ԱՄՆ | 2 | 3.0 | 6.0 | 2.8 | 5.6 | | | | | | | 2 | | $ 880.00 | $ 1,760.00 |
| Ցենտրիֆուգա լաբորատորային | HORIZON Mini E | ԱՄՆ | 2 | 8.0 | 16.0 | 7.7 | 15.4 | | 1 | | | | 1 | | | $ 750.00 | $ 1,500.00 |
| Սառը թերապիայի սարք/ շարժական | b PRO | ԱՄՆ | 8 | 4.0 | 32.0 | 3.8 | 30.4 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | $ 300.00 | $ 2,400.00 |
| Դույլեր /ոչ-արգանդային | | ԱՄՆ | 1 | 1.0 | 1.0 | 0.9 | 0.9 | | | | | | | 1 | | $ 500.00 | $ 500.00 |
| Էլեկտրովիրաբուժական միավոր | | ԱՄՆ | 1 | 2.0 | 2.0 | 1.9 | 1.9 | | | | | | | 1 | | $ 2,000.00 | $ 2,000.00 |
| Գլյուկոզայի չափիչ / 1 արկղը = 5 հատ / | | ԱՄՆ | 8 | 3.0 | 24.0 | 2.9 | 23.2 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | $ 200.00 | $ 1,600.00 |
| Գալար (Էլեկտրավիրահատական միավոր) | Gyrus acmi | ԱՄՆ | 7 | 11.0 | 77.0 | 10.9 | 76.3 | | | | | | | 7 | | $ 300.00 | $ 2,100.00 |
| Չիրոկոլյատոր | CHATTANOOGA E1 | ԱՄՆ | 1 | 3.0 | 3.0 | 2.8 | 2.8 | | 1 | | | | | | | $ 1,800.00 | $ 1,800.00 |
| Լարինգոսկոպ | | ԱՄՆ | 3 | 2.0 | 6.0 | 2.8 | 8.4 | 1 | 1 | | 1 | | | | | $ 250.00 | $ 750.00 |
| Լույս Բիլի /կապույտ/ | | ԱՄՆ | 1 | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 | | | | | | | 1 | | $ 695.00 | $ 695.00 |

4/8.1

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մահճակալ էլեկտրականառավարվող | | ԱՄՆ | 8 | 320.0 | 2560.0 | 320.0 | 2560.0 | 2 | | | | | 6 | | | $ 2,100.00 | $ 16,800.00 |
| Արյուն վերցնելու համար նախատեսված աթոռ | | ԱՄՆ | 1 | 135.0 | 135.0 | 135.0 | 135.0 | | | | | | 1 | | | $ 450.00 | $ 450.00 |
| Կոմոդ մահճակալի կողքի | | ԱՄՆ | 8 | 12.0 | 96.0 | 12.0 | 96.0 | 2 | | | | 1 | 4 | 1 | | $ 150.00 | $ 1,200.00 |
| Ձեռնափայտեր, բազկային, այլ, մանկական | | ԱՄՆ | 1 | 5.0 | 5.0 | 4.0 | 4.0 | 1 | | | | | | | | $ 150.00 | $ 150.00 |
| Հոյերի լիֆտ | | ԱՄՆ | 1 | 50.0 | 50.0 | 50.0 | 50.0 | | | | | | 1 | | | $ 1,200.00 | $ 1,200.00 |
| IV բևեռ /ձողասյուն օրինակ կաթիլայինի համար. | | ԱՄՆ | 1 | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 | 1 | | | | | | | | $ 180.00 | $ 180.00 |
| Հետազոտական սեղանի թղթե ռուլոններ՝ տուփերով | | ԱՄՆ | 2 | 4.0 | 8.0 | 3.8 | 7.6 | 2 | | | | | | | | $ 50.00 | $ 100.00 |
| Պացիենտի շարժական մեջքով աթոռ | | ԱՄՆ | 8 | 40.0 | 320.0 | 40.0 | 320.0 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | $ 1,500.00 | $ 12,000.00 |
| Կշեռք մեծահասակների | | ԱՄՆ | 3 | 15.0 | 45.0 | 15.0 | 45.0 | 1 | | | | 1 | | | 1 | $ 450.00 | $ 1,350.00 |
| Կշեռք-աթոռ | | ԱՄՆ | 1 | 35.0 | 35.0 | 35.0 | 35.0 | 1 | | | | | | | | $ 800.00 | $ 800.00 |
| Վիրահատական գործիքների կոմպլեկտ, կար դնելու կոմպլեկտ | | ԱՄՆ | 1 | 2.0 | 2.0 | 1.8 | 1.8 | | | | | 1 | | | | $ 750.00 | $ 750.00 |
| Վիրահատական սենյակի սեղան | | ԱՄՆ | 1 | 600.0 | 600.0 | 600.0 | 600.0 | | | | | | | 1 | | $ 15,000.00 | $ 15,000.00 |
| Մահճակալի սեղան | | ԱՄՆ | 8 | 35.0 | 280.0 | 35.0 | 280.0 | 6 | | | | | 2 | | | $ 500.00 | $ 4,000.00 |
| Թերապևտիկ սեղան | | ԱՄՆ | 2 | 40.0 | 80.0 | 40.0 | 80.0 | | | | | 1 | 1 | | | $ 3,500.00 | $ 7,000.00 |
| Բուժասեղան | | ԱՄՆ | 3 | 50.0 | 150.0 | 50.0 | 150.0 | 1 | | | | 1 | 1 | | | $ 1,700.00 | $ 5,100.00 |
| Անվասայլակ մանկական | | ԱՄՆ | 2 | 40.0 | 80.0 | 40.0 | 80.0 | 2 | | | | | | | | $ 1,060.00 | $ 2,120.00 |
| Անվասայլակ հատուկ կարիքների համար | | ԱՄՆ | 3 | 40.0 | 120.0 | 40.0 | 120.0 | 3 | | | | | | | | $ 1,500.00 | $ 4,500.00 |
| A4 Ֆորմատի քարտեր | | ԱՄՆ | 2 | 8.0 | 16.0 | 7.5 | 15.0 | 2 | | | | | | | | $ 40.00 | $ 80.00 |
| Անկողնային պարագաներ, օգտագործված | | Չինաստան | 16 | 8.0 | 128.0 | 7.0 | 112.0 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | $ 400.00 | $ 6,400.00 |
| Վիրաբուժական գլխարկներ, բախիլներ | | Չինաստան | 4 | 3.0 | 12.0 | 2.8 | 11.2 | 4 | | | | | | | | $ 50.00 | $ 200.00 |
| Ձեռնոցներ ոչ ստերիլ | | Թայլանդ | 40 | 10.0 | 400.0 | 9.5 | 380.0 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | $ 200.00 | $ 8,000.00 |
| Ձեռնոցներ ստերիլ | | ԱՄՆ | 8 | 8.0 | 64.0 | 7.5 | 60.0 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | $ 150.00 | $ 1,200.00 |
| Ակնոցներ , դիմակներ, եւ դեմքի պաշտպանություն | | Գերմանական | 16 | 7.0 | 112.0 | 7.0 | 112.0 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | $ 2,200.00 | $ 35,200.00 |
| Հիվանդի խալաթներ թղթե, մեկուսացնող և ծածկոց | | Չինաստան | 8 | 7.0 | 56.0 | 6.8 | 54.4 | 8 | | | | | | | | $ 50.00 | $ 400.00 |
| Վիրահատական խալաթներ ոչ [illegible] | | ԱՄՆ | 8 | 5.0 | 40.0 | 4.8 | 38.4 | 4 | | | | | 4 | | | $ 60.00 | $ 480.00 |
| Լաբորատոր, վիրաբուժական [illegible] խալաթներ, կոստյումներ /[illegible] շապիկ/ | | ԱՄՆ | 12 | 5.0 | 60.0 | 4.8 | 57.6 | 4 | | | 2 | 2 | 2 | | 2 | $ 120.00 | $ 1,440.00 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ատամնաբուժական [illegible] | | ԱՄՆ | 3 | 2.0 | 6.0 | 1.8 | 5.4 | | | | 1 | | 1 | | 1 | $ 400.00 | $ 1,200.00 |
| 2x2, 4x4, Abd ստերիլ [illegible] նյութեր | | Չինաստան | 7 | 3.0 | 21.0 | 2.8 | 19.6 | 2 | 1 | | 2 | 2 | | | | $ 65.00 | $ 455.00 |
| Վիրակապական թափանց[illegible] ժապավեններ, կապիչներ | | ԱՄՆ | 8 | 5.0 | 40.0 | 4.7 | 37.6 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | $ 650.00 | $ 5,200.00 |
| Վիրակապը փոխելու, վերքի խնամքի պարագաներ | | ԱՄՆ | 2 | 2.0 | 4.0 | 1.8 | 3.6 | 2 | | | | | | | | $ 50.00 | $ 100.00 |
| Շղարշային /մարլյա/ ոչ ստերիլ վիրակապական միջոցներ | | ԱՄՆ | 12 | 2.0 | 24.0 | 1.8 | 21.6 | 2 | 2 | | 2 | 2 | 2 | | 2 | $ 50.00 | $ 600.00 |
| Հատուկ վիրակապական միջոցներ /և այլ, որոնք չեն մտնում մյուս կատեգորիաների մեջ/ | | ԱՄՆ | 12 | 3.0 | 36.0 | 2.7 | 32.4 | 2 | 2 | | 2 | 2 | 2 | | 2 | $ 100.00 | $ 1,200.00 |
| Կափարիչով տարաներ | | ԱՄՆ | 4 | 10.0 | 40.0 | 9.0 | 36.0 | 2 | | | | | | 2 | | $ 50.00 | $ 200.00 |
| Արյուն վերցնելու պարագաներ (վակումային կոլբաներ և ասեղներ , թիթեռներ, լանցետներ, տորնիկետներ) | | ԱՄՆ | 3 | 6.0 | 18.0 | 5.7 | 17.1 | | 1 | | 2 | | | | | $ 200.00 | $ 600.00 |
| Լաբորատորային տարաներ և պիտակներ | | ԱՄՆ | 2 | 5.0 | 10.0 | 5.0 | 10.0 | 1 | 1 | | | | | | | $ 150.00 | $ 300.00 |
| Բժշկական բաժակներ, գդալներ և պիտակներ, դեղահաբի կոտրիչներ, հաշվիչներ, ներարկիչների հենակներ | | ԱՄՆ | 5 | 4.0 | 20.0 | 3.6 | 18.0 | 2 | 1 | | | | 2 | | | $ 200.00 | $ 1,000.00 |
| Մանկական շշեր և շշերի պարագաներ | | ԱՄՆ | 12 | 7.0 | 84.0 | 6.7 | 80.4 | 2 | 2 | 2 | 2 | 1 | 2 | | 1 | $ 200.00 | $ 2,400.00 |
| Տակդիրներ և անձեռոցիկներ | | ԱՄՆ | 16 | 6.0 | 96.0 | 5.6 | 89.6 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | $ 80.00 | $ 1,280.00 |
| Կանացի պարագաներ /բարձիկներ, գոտիներ, հիգիենիկ լվացման միջոցներ, նստած լվանալու տարա/ | | ԱՄՆ | 4 | 2.0 | 8.0 | 1.8 | 7.2 | | | | 2 | 2 | | | | $ 360.00 | $ 1,440.00 |
| Գինեկոլոգիական պարագաներ | | ԱՄՆ | 2 | 1.0 | 2.0 | 0.8 | 1.6 | | | | | | | 2 | | $ 300.00 | $ 600.00 |
| Բարձիկներ, դիրքավորման բարձեր | | ԱՄՆ | 14 | 4.0 | 56.0 | 3.6 | 50.4 | 14 | | | | | | | | $ 100.00 | $ 1,400.00 |
| Սպլինտեր, փաթաթաններ, սլինգեր /ոտքի և թևի ամրացման համար | | ԱՄՆ | 2 | 10.0 | 20.0 | 9.5 | 19.0 | 2 | | | | | | | | $ 400.00 | $ 800.00 |
| Ընդունման փաթեթ | | ԱՄՆ | 1 | 3.0 | 3.0 | 2.8 | 2.8 | | 1 | | | | | | | $ 5,000.00 | $ 5,000.00 |
| Ապլիկատոր-տամպոններ, բամբակյա գնդեր | | ԱՄՆ | 4 | 1.0 | 4.0 | 0.8 | 3.2 | | 1 | | 1 | 1 | | | 1 | $ 100.00 | $ 400.00 |
| Տարաներ, ավազաններ, ապակյա սպասք, ջրի բաժակներ | | ԱՄՆ | 8 | 6.0 | 48.0 | 5.6 | 44.8 | 2 | 1 | 1 | 1 | 1 | 1 | | 1 | $ 120.00 | $ 960.00 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ականջի, քթի, աչքերի պարագաներ ականջի պզորակներ, ակնոցներ, քթի խոռոչի լայնացուցիչ | | ԱՄՆ | 2 | 6.0 | 12.0 | 5.6 | 11.2 | 1 | | 1 | | | | | | $ 850.00 | $ 1,700.00 |
| Թոքե պարագաներ, անձեռոցիկներ, սրբիչներ, բաժակներ, զուգարանի թուղթ, ափսեներ | | ԱՄՆ | 8 | 5.0 | 40.0 | 4.7 | 37.6 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | $ 100.00 | $ 800.00 |
| Տակաշոր մոմլաթ /клеенка/ կապույտ | | ԱՄՆ | 9 | 4.0 | 36.0 | 3.8 | 34.2 | 3 | 3 | | | | 3 | | | $ 15.00 | $ 135.00 |
| Ցանող պարագաներ | | Մեկսիկա | 2 | 2.0 | 4.0 | 1.8 | 3.6 | 2 | | | | | | | | $ 150.00 | $ 300.00 |
| Սպիրտային և բետադինի բարձիկներ և ձողիկներ | | ԱՄՆ | 10 | 2.0 | 20.0 | 1.8 | 18.0 | 5 | | | 1 | 2 | 2 | | | $ 100.00 | $ 1,000.00 |
| Միզուղիների պարկեր, տոպրակներ և այլ պարագաներ | | ԱՄՆ | 2 | 7.0 | 14.0 | 6.7 | 13.4 | | | | | 2 | | | | $ 1,100.00 | $ 2,200.00 |
| Միզահեռացման կատետորներ, հարթակներ և միացման պարագաներ | | Մեկսիկա | 3 | 4.0 | 12.0 | 3.9 | 11.7 | | | | | 3 | | | | $ 800.00 | $ 2,400.00 |
| Օճառ 177կգ. | 1 | ԱՄՆ | 37 | 177.0 | 177.0 | 155.0 | 155.0 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 23 | $ 12.00 | $ 2,124.00 |
| Նասկիներ թերապևթիկ | | ԱՄՆ | 2 | 2.0 | 4.0 | 1.8 | 3.6 | 1 | | | | | 1 | | | $ 50.00 | $ 100.00 |
| Թաց անձեռոցիկներ | | ԱՄՆ | 7 | 9.0 | 63.0 | 8.7 | 60.9 | 4 | 1 | 1 | | | | | 1 | $ 35.00 | $ 245.00 |
| Թաց անձեռոցիկներ / պլաստմասե տուփերով / | | ԱՄՆ | 7 | 8.0 | 56.0 | 7.8 | 54.6 | 7 | | | | | | | | $ 40.00 | $ 280.00 |
| Ձեռքերի ախտահանիչ | | ԱՄՆ | 3 | 2.0 | 6.0 | 1.8 | 5.4 | 3 | | | | | | | | $ 20.00 | $ 60.00 |
| Ցելաֆոնե պարկեր | | ԱՄՆ | 2 | 4.0 | 8.0 | 3.8 | 7.6 | | | | | | | 2 | | $ 10.00 | $ 20.00 |
| Ձեռքի անտիսեպտիկ | | ԱՄՆ | 2 | 6.0 | 12.0 | 5.6 | 11.2 | 2 | | | | | | | | $ 25.00 | $ 50.00 |
| Անտիսեպտիկներ տարբեր | | ԱՄՆ | 3 | 3.0 | 9.0 | 2.8 | 8.4 | 3 | | | | | | | | $ 15.00 | $ 45.00 |
| Ներարկիչներ միանգամյա | | ԱՄՆ | 1 | 4.0 | 4.0 | 3.8 | 3.8 | | | | | | | 1 | | $ 20.00 | $ 20.00 |
| Անձեռոցիկ սովորական | | ԱՄՆ | 1 | 2.0 | 2.0 | 1.8 | 1.8 | | | | | | | | 1 | $ 10.00 | $ 10.00 |
| Մոմլաթներ | | ԱՄՆ | 1 | 1.0 | 1.0 | 0.8 | 0.8 | 1 | | | | | | | | $ 10.00 | $ 10.00 |
| Մանիտոր Philips ճնշման | | ԱՄՆ | 1 | 3.0 | 3.0 | 2.8 | 2.8 | | | | | | | 1 | | $ 2,000.00 | $ 2,000.00 |
| Ռետինե հողաթափեր | | ԱՄՆ | 1 | 8.0 | 8.0 | 7.8 | 7.8 | 1 | | | | | | | | $ 18.00 | $ 18.00 |
| Պարկ հեղուկով | | ԱՄՆ | 2 | 3.0 | 6.0 | 2.8 | 5.6 | | | | | | | 2 | | $ 43.00 | $ 86.00 |
| Ախտահանիչ միջոց | | ԱՄՆ | 1 | 3.0 | 3.0 | 2.8 | 2.8 | 1 | | | | | | | | $ 12.00 | $ 12.00 |
| Քուկներ | | ԱՄՆ | 8 | 3.0 | 24.0 | 2.8 | 22.4 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | $ 22.00 | $ 176.00 |
| Ֆարինդասկոպ | | ԱՄՆ | 1 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 1 | | | | | | | | $ 25.09 | $ 25.09 |
| Ուսապարկեր (առաջին օգնության պարագաներ) 1*6 | | ԱՄՆ | [illegible]4 | 6.0 | 324.0 | 5.1 | 275.4 | | | | | | | | | $ 30.00 | $ 1,620.00 |
| Մանկաբուժական սկուտերներ | | ԱՄՆ | [illegible] | 15.0 | 45.0 | 15.0 | 45.0 | | 3 | | | | | | | $ 10.00 | $ 30.00 |
| Ընդամենը | | | 6[illegible] | | 8340 | | 8040.0 | | | | | | | | | | $ 311,676.09 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**03 ապրիլի 2015 թվականի N Մ- 302-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1071-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 13-ի N 07/80-2/5910-15 և մարտի 12-ի N 06/18-4/5783-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի համար ձեռք բերված բեռը՝ ռադիոֆիզիկական ուսումնական սարքեր՝ իրենց բաղադրամասերով (3 տեղ, 73 կգ ընդհանուր քաշով, 9,246 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, որից տեղափոխման ծախսերը կազմել են 750 ԱՄՆ դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ կրթության և գիտության նախարարության «ԵՊՀ» ՊՈԱԿ-ի» և «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի համագործակցություն» ծրագրի մասին» N Մ-1071-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**03 ապրիլի 2015 թվականի N Մ- 303 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1071-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ) (1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N 07/80-2/7315-15 և մարտի 27-ի N 06/18-4/7302-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի համար ձեռք բերված բեռը՝ «MT9930L» տեսակի բևեռացնող, տրինոկուլյար մանրադիտակ՝ իր բաղադրամասերով (1 տեղ, 18 կգ ընդհանուր քաշով, 8,326.94 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 302 եվրո, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ կրթության և գիտության նախարարության «ԵՊՀ» ՊՈԱԿ-ի» և «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի համագործակցություն» ծրագրի մասին» N Մ-1071-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-244-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**03 ապրիլի 2015 թվականի N Մ- 304 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 17-ի N 07/80-2/6205-15 և մարտի 18-ի N 06/18-4/6282-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 16-ի N ԱՄ/22.2/2803-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռը (լաբորատոր ախտորոշիչ նյութեր և գլիցերոլ՝ 10 տեղ, 121.5 կգ ընդհանուր քաշով, 36,256.55 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1339-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**03 ապրիլի 2015 թվականի N Մ- 305 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 25-ի N 07/80-2/6963-15 և մարտի 27-ի N 06/5-1/7333-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 24-ի N ԱՄ/22.2/3182-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռը (ռենտգեն սարքի թվայնացնող սարք-հավաքածու՝ 3 տեղ, 201.4 կգ ընդհանուր քաշով, 23,361.08 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյամ» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1339-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**03 ապրիլի 2015 թվականի N Մ- 306 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (2)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 25-ի N 07/80-2/6958-15 և մարտի 25-ի N 06/5-1/6966-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 24-ի N ԱՄ/22.2/3188-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռը (բժշկական կահույք (քարշիչ պահարան)՝ 2 տեղ, 725 կգ ընդհանուր քաշով, 36,884 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1339-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**03 ապրիլի 2015 թվականի N Մ-307-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N 07/80-2/7330-15 ու մարտի 27-ի N 06/5-1/7197-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 24-ի N ԱՄ/22.2/3191-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղեր՝ 4 տեղ, 18 կգ քաշով, 3,344 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 14,597 հնդկական ռուփի, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**03 ապրիլի 2015 թվականի N Մ-308 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 6-ի N ԱԿ/15/2401-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 16-ի N 07/80-2/6048-15 ու մարտի 11-ի N 06/3-3/5630-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-1074-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լոջիք Ինտեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00086936) 2015 թվականի փետրվարի 11-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԳՀ ԾՀԱՊՁԲ-11/15-2014/16-7 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր պարագաների գնում՝ 4,242,618 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**03 ապրիլի 2015 թվականի N Մ- 309 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 16-ի N ԱԿ/15/2777-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 24-ի N 07/80-2/6812-15 և մարտի 24-ի N 06/3-3/6724-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1339-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Թագ Հէմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01232586) 2015 թվականի փետրվարի 11-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԳՀ ԾՀԱՊՁԲ-11/15-2014/16-11 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական պարագաների գնում՝ 1,316,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**03 ապրիլի 2015 թվականի N Մ- 310 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 16-ի N ԱԿ/15/2776-15 գրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 23-ի N 07/80-2/6689-15 և մարտի 23-ի N 06/3-3/6664-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» ծրագրի մասին» N Մ-068-Ա (2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1339-Ա որոշման խմբագրությամբ) և 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00021334) 2015 թվականի փետրվարի 11-ին կնքված N ՀՀ ԱՆ ԳՀ ԾՀԱՊՁԲ-11/15-2014/16-5 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով



նախատեսված բժշկական պարագաների գնում 3,079,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի (1,070,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և 2,009,400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**03 ապրիլի 2015 թվականի N Մ-311 -Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-503-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 30-ի N 07/80-2/7366-15 ու մարտի 25-ի N 06/3-3/6924-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 25-ի N ԱՄ/22.2/3230-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 01243384) կողմից իրականացվող գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-503-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-247-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01202252) 2014 թվականի մարտի 27-ին կնքված պայմանագրում և պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 2015 թվականի փետրվարի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով



նախատեսվում է տարածքի վարձակալում՝ 10,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2015 թվականի հունվարի 1-ին կնքված՝ N ՏԱԳ-ԾԱՁԲ-15/5 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մարտի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ» կապի տրամադրման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 1,887,989 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**03 ապրիլի 2015 թվականի N Մ-312 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 18-ի N 07/80-2/6301-15 և մարտի 23-ի N 06/18-4/6555-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 19-ի N ԱՄ/22.2/2993-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք՝ TMC207 100 մգ, 1 արկղ, 3.3 կգ քաշով, 1,568 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 73.33 եվրո, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1217-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 313 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ Պ. ՉԱՅԿՈՎՍԿՈՒ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 24-ի N 07/80-2/6827-15 և մարտի 23-ի N 06/3-3/6554-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մարտի 19-ի N 02/14/3128-14 ու Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2015 թվականի մարտի 20-ի N 01/3.1/1343-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 95,591,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի ամբողջական կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի մարտի 16-ին կնքված N ՀՀ-Կ-03/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում նշված դպրոցում՝ 95,591,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«20» մարտի 2015թ.

**« Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Պ.Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի ամբողջական կահավորում »**

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ամբողջովին ապահովել Երևան քաղաքի Պ.Չայկովսկու երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ (ֆիզիկական և իրավաբանական անձիք) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Երևան քաղաք, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 95.591.000,00 ՀՀ դրամ: |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Երևան քաղաքի Պ.Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի աշակերտներն ու ուսուցիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ մարտի 16-ից մինչև 2016թ. օգոստոսի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ մարտի 16-ից մինչև 2016թ. օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում դպրոցի ամբողջական կահավորում 95.591.000,00 դրամ արժեքով |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի թիվ 1հավելվածի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում և անհատույց հանձնում՝ 95.591.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Մշակույթի նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամփոփիչ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 314 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԹԱՎՇՈՒՏ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 19-ի N 07/80-2/6439-15 և մարտի 19-ի N 06/3-3/6430-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մարտի 18-ի N 02/14/3071-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի մարտի 20-ի N 03/07-1/2921-14 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի մարտի 19-ի N 01/1324-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,049,800 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թավշուտ գյուղի դպրոցի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի փետրվարի 16-ին կնքված N ՀՀ-Կ-02/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում նշված դպրոցում՝ 1,049,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«20» մարտի 2015թ.

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թավշուտ գյուղի դպրոցի մասնակի կահավորում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մասամբ ապահովել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թավշուտ գյուղի դպրոցը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ (ֆիզիկական և իրավաբանական անձիք) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, Թավշուտ գյուղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.049.800,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թավշուտ գյուղի համայնքը |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ փետրվարի 16-ից մինչեւ 2015թ մայիսի 16-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ փետրվարի 16-ից մինչեւ 2015թ մայիսի 16-ը ընկած ժամանակահատվածում մասնակի կահավորել Թավշուտի դպրոցը 1.049.800,00 ՀՀ դրամի սահմաններում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ապրանքատեսակների ցանկի համաձայն՝ գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 1.049.800,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության եւ կրթության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ([illegible] եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 315 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N 07/80-2/7336-15 և մարտի 27-ի N 06/3-3/7301-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մարտի 24-ի N 02/14/3424-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի մարտի 25-ի N 03/07-1/3085-15 ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի մարտի 24-ի N 01/04.2/1010-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 43,383,200 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի մարտի 16-ին կնքված N ՀՀ-Կ-04/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում նշված դպրոցում՝ 43,383,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«20» մարտի 2015 թ.

# « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի կահավորում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի վերանորոգվող միջնակարգ դպրոցը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ (ֆիզիկական և իրավաբանական անձիք) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արմավիրի մարզ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 43.383.200,00 ՀՀ դրամ: |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտներն ու ուսուցիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ մարտի 16-ից մինչև 2016թ. օգոստոսի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ մարտի 16-ից մինչև 2016թ. օգոստոսի 31-ը դպրոցի ամբողջական կահավորում՝ 43.383.200,00 դրամ արժողությամբ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ապրանքատեսակների ցանկի /կցվում է/ համաձայն գույքի պատրաստում, գնում տեղափոխում և անհատույց հանձնում՝43.383.200,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արմավիրի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամփոփիչ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 316 -Ա**
**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 17-ի N 07/80-2/6100-15 և մարտի 16-ի N 06/3-3/5949-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 մարտի 16-ի N 02/14/2939-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մարտի 13-ի N ՖԲ/ԱնՄ-4/2002-15 ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2015 մարտի 16-ի N 01/15/798-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 12,272 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ1 հատուկ դպրոցի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Հազարաշեն» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 08400329) 2015 թվականի մարտի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 12,272 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն
Բ. Սարգսյանի ..................... կողմից
9 մարտի 2015

**Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի շենքի մասնակի** վերանորոգում

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերանորգել Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի խոհանոցը, ճաշասենյակը, աստիճանավանդակն ու երկու սանհանգույցները, որն կստեղծի հիգիենիկ և հարմարավետ պայմաններ դպրոցում ուսուցանող 60 աշակերտների առօրեան և կրթական գործընթացը կազմակերպելու համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված). |
| 3 | Բարեգործը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ, ԱՄՆ |
| 4 | Ծրագրի կատարողը | Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ<br>հասցեն՝ ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Գավառի թիվ 1 հատուկ դպրոց ՊՈԱԿ<br>Հասցե՝ ՀՀ, ք. Գավառ, Միքայելյան 27<br>Բնագավառը՝կրթական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 12 272.00 (տասներկու հազար երկու հարյուր յոթանասուներկու) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Գավառի թիվ 1 հատուկ դպրոց ՊՈԱԿ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողու-թյունը և/ կամ սկիզբը, ավարտը | Սկիզբ՝ 04.03.2015, ավարտ՝ 04.06.2015 |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը | Ծրագրի շրջանակում նախատեսվում է մասնակի վերանորգել Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի խոհանոցը, ճաշասենյակը, աստիճանավանդակն ու երկու սանհանգույցները, որն կնպաստի դպրոցում աշակերտների համար հիգիենիկ և հարմարավետ պայմանների ստեղծմանը:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 12 272.00 (տասներկու հազար երկու հարյուր յոթանասուներկու) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Ծրագիրն իրականացվելու է 04.03.2015-ից մինչև 04.06.2015 –ը:<br><br>Կատարվող աշխատանքների մանրամասն նկարագրությունը, ծավալները և արժեքները տրված են պայմանագրին կից հավելվածում: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 12 272.00 (տասներկու հազար երկու հարյուր յոթանասուներկու) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով:<br><br>Շինարարական կապալի պայմանագիր առ 03.03.2015, կնքված՝ Հազարաշեն ԱԿ հետ, հասցե՝ ք. Գավառ, Վաղարշ Փոշոտյան 1, ՀՎՀՀ 08400329 և Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, հասցե ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115 միջև: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կառույցների/ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը իրականացվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի կողմից՝ եռամսյակային, և ամսական հաշվետվությունների միջոցով, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 317 -Ա**
**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ, ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՋՐԱՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ, ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 30-ի N 07/80-2/7508-15 և մարտի 30-ի N 06/3-3/7482-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 մարտի 27-ի N 02/14/3564-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մարտի 26-ի N ՖԲ/ԱնՄ-4/2482-15 ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2015 մարտի 26--ի N 1/3/1-1/1296-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 64,317.27 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ և 1,637,000 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջանգակատուն համայնքի մանկապարտեզի տանիքի վերանորոգում, շենքի արտաքին ջրամեկուսացում, մասնակի վերանորոգում և խաղահրապարակի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «ԿԱՆԱԿԱ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2015 թվականի մարտի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինվերանորոգման աշխատանքների իրականացում՝ 64,317.27 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2015 թվականի մարտի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղասարքերի պատրաստում և մատակարարում՝ 1,637,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն
Բ. Սարգսյանի ............ կողմից
23 մարտի 2015

Ամերիկյան Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող
ՀՀ Արարատի մարզի Զանգակատուն համայնքի մանկապարտեզի
տանիքի վերանորոգման, շենքի արտաքին ջրամեկուսացման, մասնակի վերանորոգման և խաղահրապարակի կառուցման

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է իրականացնել Զանգակատան համայնքի մանկապարտեզի տանիքի վերանորոգման, արտաքին պատերի ջրամեկուսացման, կոյուղու վերանորոգման, շենքի մասնակի վերանորոգման և մանկապարտեզի տարածքում խաղահրապարակի տեղադրման աշխատանքները, որն կստեղծի հարմարավետ պայմաններ մանկապարտեզ հաճախող 33 սաների համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված)․ |
| 3 | Բարեգործ | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ, ԱՄՆ |
| 4 | Ծրագրի կատարողը | Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ<br>հասցեն՝ ք. Երևան 0010, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Զանգակատան համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ<br><br>Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, Զանգակատուն համայնք, Դպրոցականների 1 փակուղի, թիվ 2<br>Բնագավառը՝կրթական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 64,317.27 (վաթսունչորս հազար երեք հարյուր տասնյոթ) ԱՄՆ դոլար քսանյոթ ցենտ համարժեք ՀՀ դրամ և 1 637 000 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արարատի մարզ, Զանգակատուն համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողու-թյունը և/ կամ սկիզբը, ավարտը | Ծրագրի սկիզբ 17.03.2015, ավարտ17.08.2015: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը | Ծրագրի շրջանակում նախատեսվում է վերանորգել Զանգակատուն համայնքի մանկապարտեզի տանիքը, իրականացնել արտաքին պատերի ջրամեկուսացում, կառուցել բետոնե մայթեր, կոյուղու արտաքին ցանց, կատարել շենքի մասնակի վերանորոգում և տարածքում կառուցել խաղահրապարակ:<br><br>Շին-վերանորոգման աշխատանքների արժեքը կազմում է 64,317.27 (վաթսունչորս հազար երեք հարյուր տասնյոթ) ԱՄՆ դոլար և քսանյոթ ցենտին համարժեք ՀՀ դրամ, իսկ խաղահրապարակի պարագաների ձեռքբերման-տեղադրման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է՝ 1 637 000 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամ գումար:<br><br>Ծրագիրն իրականացվելու է հետևյալ ժամանակահատվածում.<br>շին-վերանորոգման աշխատանքներ՝ 17.03.2015-17.08.2015<br>խաղահրապարակի պարագաների տեղադրման աշխատանքներ՝ 17.03.2015-17.06.2015<br><br>Կատարվող աշխատանքների մանրամասն նկարագրությունը, ծավալները և արժեքները տրված են պայմանագրերին կից հավելվածներում: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 64 317.27 (վաթսունչորս հազար երեք հարյուր տասնյոթ) ԱՄՆ դոլար և քսանյոթ ցենտին համարժեք ՀՀ դրամի չափով՝ շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր առ 17.03.2015, կնքված՝ Կանակա ԲԲԸ-ի (հասցե՝ ք. Վանաձոր 2022, Նժդեհի փողոց թիվ 4, ՀՎՀՀ 06901369) և Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (հասցե ք. Երևան 0010, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 1 637 000 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ պայմանագիր առ 17.03.2015, կնքված՝ Մագնոն ԲԲԸ-ի (հասցե՝ ք. Գյումրի 3101, Ալեք Մանուկյան 1, ՀՎՀՀ 05501766) և Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (հասցե՝ ք. Երևան 0010, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կառույցների/ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի կողմից՝ եռամսյակային, և ամսական հաշվետվությունների միջոցով, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 318 -Ա**

**քաղ. Երևան**

**«ՇՈՂԻԿ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀՈԳ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N 07/80-2/7311-15 և 2015 թվականի մարտի 27-ի N 06/3-3/7200-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մարտի 23-ի N 02/14/3327-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մարտի 23-ի N ՖԲ/ԱնՄ-4/2347-15 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2015 թվականի մարտի 23-ի N 01/10.1/10998-15, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2015 թվականի 24-ի N 1/3/1-1/1265-15 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի մարտի 25-ի N 01/21.1/1352-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 1,500,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով «Հոգ Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արարատի, Արագածոտնի, Տավուշի մարզպետներին ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Շողիկ» հայկական բարեգործական

հասարակական կազմակերպություն

տնօրեն Գ. ՄԻՆԱՍՅԱՆԻ կողմից

"19" մարտի 2015 թ.

«ՀՈԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

4/9

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աջակցություն ցուցաբերել կազմակերպությունում գրանցված սոցիալապես անապահով ընտանիքներին, բազմազավակ ընտանիքներին, անապահով սիրիահայ ընտանիքներին: Կազմակերպել ամառային ճամբար 7-16 տարեկան երեխաների համար:<br>Այրանքի տեսքով ներմուծված օգնությունը՝ հագուստ, կոշկեղեն, կենցաղային իրեր, սնունդ, խաղալիքներ, հիգիենիկ պարագաներ, գրենական պիտույքներ և պայուսակներ տրամադրել, բացի ծրագրում ընդգրկված շահառուներից նաև ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունում հաշվառման վերցված սոցիալապես անապահով ընտանիքներին:<br>Ձմեռային փառելափայտով աջակցություն ցուցաբերել կազմակերպությունում գրանցված մոտ երեսունհինգ սոցիալապես անապահով ընտանիքներին: |
| 2. | Ծրագրի՝ բարեգործական որակման նպատակները ըստ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի № 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի | 3-րդ կետի բ) ենթակետի համաձայն օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը (բարեգործներ) | Անգլիայի «Հայկական ծառայություններ» բարեգործական հիմնադրամ: |
| 4. | Ծրագիրն իրականացնողները* | «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպություն ք. Երևան, Նոր Արեշ 26փ. 59/1տ, ՀՎՀՀ՝ 00438145 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Ծրագիրը առնչվում է սոցիալական ոլորտին և ընդգրկում է Երևան քաղաքը, Արարատի, Արագածոտնի, Տավուշի մարզերը, ԼՂՀ-ը: |
| 6. | Ծրագրի բյուջեն (ստացվելիք գումարներն ըստ ֆինանսավորման աղբյուրների*, դրանց ստացման նախատեսվող ժամանակները, կատարման ենթակա ծախսերի նախատեսվող ուղղությունները, չափերը և ժամկետները) | Ծրագրի բյուջեն կազմում է 1.500.000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ: |
| 7. | Ծրագրի շահառուները* կամ նրանց ընտրության սկզբունքները, չափանիշները | Ծրագրի շահառուներն են կազմակերպությունում գրանցված սոցիալապես անապահով՝ Երևան քաղաքի (մոտ 450), Արարատի մարզի (մոտ 250), Արագածոտնի մարզի (մոտ 300), Տավուշի մարզի (մոտ 60), ԼՂՀ -ի մոտ (150) սոցիալապես անապահով ընտանիքները, սիրիահայ ընտանիքները, ինչպես նաև ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը | 2015թվականի ապրիլի 1-ից մինչև 2018թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը: | Ծրագրի փուլերը<br>1-ին փուլ<br>-2015թ. հունիսի 23-ից – 340,000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ<br>Երևան քաղաքի, ՀՀ Արարատի, Արագածոտնի, Տավուշի մարզերի, ԼՂՀ սոցիալապես անապահով ընտանիքների, սիրիահայ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-«Երբ գալիս է սեպտեմբերը» ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների, հագուստի, կոշկեղենի նվիրաբերում Երևան քաղաքի, ՀՀ Արարատի, Արագածոտնի, Տավուշի մարզերի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և սիրիահայ ընտանիքների երեխաներին:<br><br>2-րդ փուլ.<br>-2016թ. հունիսի 21-ից – 375,000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ<br>Երևան քաղաքի, ՀՀ Արարատի, Արագածոտնի, Տավուշի մարզերի, ԼՂՀ սոցիալապես անապահով ընտանիքների, սիրիահայ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-«Երբ գալիս է սեպտեմբերը» ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների, հագուստի, կոշկեղենի նվիրաբերում Երևան քաղաքի, ՀՀ Արարատի, Արագածոտնի, Տավուշի մարզերի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և սիրիահայ ընտանիքների երեխաներին:<br><br>3-րդ փուլ<br>-2017թ. հունիսի 20-ից – 375,000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ<br>Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ սոցիալապես անապահով ընտանիքների, սիրիահայ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-«Երբ գալիս է սեպտեմբերը» ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների, հագուստի, կոշկեղենի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և սիրիահայ ընտանիքների երեխաներին:<br><br>4-րդ փուլ<br>-2018թ. հունիսի 19-ից – 410,000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ<br>Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ սոցիալապես անապահով ընտանիքների, սիրիահայ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-«Երբ գալիս է սեպտեմբերը» ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների, հագուստի, կոշկեղենի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արագածոտնի մարզի, Տավուշի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և սիրիահայ ընտանիքների երեխաներին: |
| 10. | Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը (եթե հայտնի են, ապա պետք է նշել նաև գործարքների կողմերը, միջնորդ իրավաբանական կամ ֆիզիկական անձիք, այդ թվում նաև բարեգործական բեռի ներմուծման հետ կապված)*: | Նախատեսված է ծրարի ընդհանուր արժեքը բաշխել հետևյալ կերպ<br>2015թ. 1-ին տարին 340.000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ<br>2016թ. 2-րդ տարին 375.000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ<br>2017թ. 3-րդ տարին 375.000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ<br>2018թ. 4-րդ տարին 410.000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ<br>**Ներմուծում (ծրագրի ամբողջ ընթացքում)**<br>1) հագուստ, կոշիկ, սպիտակեղեն, խաղալիք – 950.000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ - բաշխման համար<br>2) սնունդ - 30.000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ - ճամբարի կազմակերպման և բաշխման համար<br>3) հիգիենիկ պարագաներ – 55.000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ - ճամբարի կազմակերպման և բաշխման համար<br>4) գույք (սեղան, աթոռ, պահարան, մահճակալ, հեծանիվ, սայլակ) - 200.000 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ - ճամբարի կազմակերպման համար և բաշխման համար.<br>5) գրենական պիտույքներ, դպրոցական պայուսակ – 215.400 ԱՄՆ-ի դոլլարին համարժեք դրամ - «Երբ գալիս է սեպտեմբերը» և |

4/9

| | | |
|---|---|---|
| | | ճամբարի փուլերը իրականացնելու համար<br>6) ավտոքարշակ - 800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ<br>7) Փայտ կոտրելու էլեկտրական գործիք - 800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ<br>Ճամբարի կազմակերպում (ծրագրի ամբողջ ընթացքում)<br>1) երեխաների տեղափոխում, կոմունալ և ընթացիկ ծախսեր – 10.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ<br>2) տեղական շուկայից ձեռք բերվող ապրանքներ (հաց, կաթնամթերք, մսամթերք և այլն) - 30.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ – ճամբարի համար<br>Վառելափայտ (ծրագրի ամբողջ ընթացքում) - 8000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ |
| 11. | Անմիջական շահառուների սպառմանը չուղղվող ծախսերը (կազմակերպական ծախսեր), դրանց կատարման կարգը, այդ ծախսերի չափաբաժինները ըստ ծրագրի փուլերի, եթե այդպիսիք առանձնացված են: | Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ (եթե համագործակցություն նախատեսվում է), համագործակցության բովանդակությունը, իրականացման կարգը*: | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը (եթե վերահսկողություն նախատեսվում է): | Ծրագրի իրականացման արդյունավետության նկատմամբ վերահսկողություն կիրականացվի Անգլիայի «Հայկական ծառայություններ» բարեգործական հիմնադրամի կողմից: Կառավարության գործունեության վերաբերյալ սահմանված կարգով տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի պետեկամուտների կոմիտեին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 մայիսի 2015 թվականի N Մ- 319 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի ապրիլի 3-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԵՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԵՎ ՀԻՆԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 17-ի N 07/80-2/6204-15 և մարտի 17-ի N 06/3-3/6168-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մարտի 16-ի N 02/14/2930-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի մարտի 16-ի N 03/07-1/2619-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մարտի 16-ի N ՖԲ/ԱնՄ-4/2118-15 ու Երևանի քաղաքապետի 2015 թվականի մարտի 17-ի N 02/12-13638հ եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 11,993,580 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևան քաղաքի վեց մանկապարտեզների և հինգ դպրոցների աշխատակազմերի վերապատրաստում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 00064024) հետ 2014 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված N WVA/YER/BC/SER/02/FY15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացների կազմակերպում և անցկացում՝ 11,993,580 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ      Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրենի ԺՊ՝
Սուրեն Սաղաթելյան

09 ապրիլի 2015թ.

**«ՀՀ Երևան քաղաքի վեց մանկապարտեզների և հինգ դպրոցների աշխատակազմերի վերապատրաստում»**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է ուսուցման դասընթացներ կազմակերպել ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի վեց մանկապարտեզների մանկավարժների և հինգ դպրոցների ուսուցիչների համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Կանադայի աջակցող գրասենյակ<br>*Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada* |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝ +374 10 749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան<br>Բնագավառը՝ կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 11,993,580 (տասնմեկ միլիոն ինը հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 149, 151, 153, 156, 159, 160 մանկապարտեզները և նույն վարչական շրջանի թիվ 84, 85, 117, 136, 147 դպրոցները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 12 դեկտեմբերի 2014թ. – 30 հունիսի 2015թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2014 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2015 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «Ծնողական կրթություն» թեմայով դասընթացներ կազմակերպել ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի վեց մանկապարտեզների մանկավարժների համար, ինչպես նաև երեխայակենտրոն ուսուցման վերաբերյալ դասընթացներ կազմակերպել նույն վարչական շրջանի հինգ դպրոցների ուսուցիչների համար:<br>Ծրագրի շրջանակներում մասնավորապես նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝<br>✓ վերապատրաստման իրականացում 6 մանկապարտեզների դաստիարակների և բուժ անձնակազմի համար,<br>✓ յոթ խորհրդատվական այցելություն, |



| | | |
|---|---|---|
| | | ✓ վերապատրաստման իրականացում 5 դպրոցների ուսուցիչների համար,<br>✓ տեխնիկական և խորհրդատվական աջակցություն 6 մանկապարտեզների և 5 դպրոցների մասնագետներին,<br>✓ համապատասխան գրականության և ուսուցողական նյութերի տրամադրում:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 11,993,580 (տասնմեկ միլիոն ինը հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի հետ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 11,993,580 (տասնմեկ միլիոն ինը հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցելու է ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 149, 151, 153, 156, 159, 160 մանկապարտեզների, նույն վարչական շրջանի թիվ 84, 85, 117, 136, 147 դպրոցների, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Կանադայի աջակցող գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Երևան ՏԶԾ ղեկավար՝

Մարինա Հովհաննիսյան՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 320 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՆԱԻՐԻ» ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N 07/80-2/7314 -15 և մարտի 27-ի N 06/5-1/7199-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մարտի 26-ի N ՖՐ/ԱնՄ-4/2480-15 ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2015 թվականի մարտի 27-ի N 1/3/1-1/1318-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Ջակոլին Բրիկմի կողմից «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռը (121 կգ քաշով, 684 եվրո արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 792.50 եվրո, բեռի ցանկը կցվում է, «ՄԾՓ» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է կազմակերպության շահառուներին անվճար բաշխելու համար:
2. «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Թարգմանություն անգլերենից հայերեն

Ապրանքների ցուցակ / ոչ առևտրային / Նաիրի ՈՊԿ Ազոյան Գայանե

| Առարկան | Բրենդը | Քաշը | Երկարությունը | Լայնությունը | Բարձրությունը | Գույնը | Գումարը/ոչ առևտրային |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ֆաթրոյ | Ֆաթրոյ | 10 | 1.1 | 0.6 | 0.6 | Կարմիր | 150 940180 |
| Կախովի ֆաթրոյ | Ֆաթրոյ | 32 | 1.2 | 0.8 | 0.3 | Կարմիր | 250 940140 |
| Երեխաների աթոռ | Ատլաս | 26 | 1.6 | 0.51 | 0.76 | Դեղին | 75 940171 |
| Մեջքն ուղղող գոտիներ/2/ | | 6 | 0.62 | 0.62 | | Սպիտակ/շագանակագույն | 30 9401290 |
| Արկղ 4 | | 5 | | | | | |
| Շալվարներ /11/ | | 4 | | | | | 15 611020 |
| Գուլպաներ /15/ | | 1 | | | | | 10 611510 |
| Արկղ 5 | | 8 | | | | | |
| Երեխաների զուգարաններ | | 7 | | | | Արծաթագույն | 20 907013 |
| Վերարկուներ/3/ | | 1 | | | | | 10 610230 |
| Արկղ 6 | | | | | | | |
| Գուլպաներ/27/ | | 2 | | | | | 20 611510 |
| Շապիկ | | 1 | | | | | 5 611020 |
| Վերարկուներ/3/ | | 1 | | | | | 10 610230 |
| Շալ/ 4/ | | 1 | | | | | 5 611710 |
| Հեծանիվ | | 15 | | | | | 20 87150010 |
| | | | | | | | 620 |

Առկա է ստորագրություն

Թարգմանություն անգլերենից հայերեն

Ապրանքների ցուցակ / ոչ առևտրային / Նաիրի ՈՊԿ

| Առարկան | Բրենդը | Քաշը | Երկարությունը | Լայնությունը | Բարձրությունը | Գույնը | Գումարը/ոչ առևտրային |
|---|---|---|---|---|---|---|---|
| Արկղ 1 | | | 5 | | | | |
| Շալվարներ /11/ | | | 4 | | | | 15 611020 |
| Գուլպաներ /10/ | | | 1 | | | | 5 611510 |
| Արկղ 2 | | | 5.5 | | | | |
| Շալվարներ /11/ | | | 4 | | | | 15 611020 |
| Գուլպաներ /15/ | | | 1.5 | | | | 7 611510 |
| Արկղ 3 | | | 5.5 | | | | |
| Շալվարներ /11/ | | | 4 | | | | 15 611020 |
| Գուլպաներ /15/ | | | 1.5 | | | | 7 611510 |
| | | | | | | | 64 |

*********************************************

Թարգմանությունը կատարվել է «ԱՐԵԳԱԿ» Թարգմանչական Կենտրոնում:

Պատասխանատվություն ենք կրում թարգմանության ճշգրտության, այլ ոչ թե բնօրինակում շարադրված նյութի համար:

Տնօրեն ՝ Ք. Հակոբյան /

20. 03. 2015

«ԱՐԵԳԱԿ»
ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"AREGAK"
TRANSLATION CENTER
ԹԱՐԳՄԱՆԻՉ
TRANSLATOR

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 321 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-010-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 23-ի N 07/80-2/6688-15 ու մարտի 25-ի N 06/5-1/6882-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մարտի 23-ի N ՖԲ/ԱնՄ-4/2348-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված կոշկեղենը (85 տեղ, 8,232.70 կգ ընդհանուր քաշով, 157,285 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 7,285 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի N Մ-010-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի**

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)** 4/11.13

**Կոնտեյների համարն է՝ EGHU 9078086: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 157285.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 7285.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 8232,7 կգ, տեղերի քանակը 85:**

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 60<br>110<br>420 | զույգ<br>զույգ<br>զույգ | Տղամարդու կոշիկ<br>Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 1767.46<br>3130.26<br>11420.61 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 77<br>130<br>420 | զույգ<br>զույգ<br>զույգ | Տղամարդու կոշիկ<br>Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 2268.23<br>3699.39<br>11420.61 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Տավուշի տարածաշրջան) |
| 70<br>130<br>420 | զույգ<br>զույգ<br>զույգ | Տղամարդու կոշիկ<br>Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 2062.03<br>3699.39<br>11420.61 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 50<br>120 | զույգ<br>զույգ | Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 1422.84<br>3263.03 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 60<br>100<br>360 | զույգ<br>զույգ<br>զույգ | Տղամարդու կոշիկ<br>Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 1767.46<br>2845.69<br>9789.09 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 60<br>100<br>360 | զույգ<br>զույգ<br>զույգ | Տղամարդու կոշիկ<br>Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 1767.46<br>2845.69<br>9789.09 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |

02528755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

4/11.13

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 60<br>110<br>420 | զույգ<br>զույգ<br>զույգ | Տղամարդու կոշիկ<br>Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 1767.46<br>3130.26<br>11420.61 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 60<br>100<br>360 | զույգ<br>զույգ<br>զույգ | Տղամարդու կոշիկ<br>Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 1767.46<br>2845.69<br>9789.09 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 60<br>100<br>360 | զույգ<br>զույգ<br>զույգ | Տղամարդու կոշիկ<br>Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 1767.46<br>2845.69<br>9789.09 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 60<br>240 | զույգ<br>զույգ | Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 1707.41<br>6526.06 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 60<br>240 | զույգ<br>զույգ | Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 1707.41<br>6526.06 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 283<br>120 | զույգ<br>զույգ | Մարզական կոշիկ<br>Կանացի կոշիկ | | 8053.28<br>3263.03 | Մ-010-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 8232.7 | 157285.00 | |

02328755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 322 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 30-ի N 07/80-2/ 7507-15 և մարտի 31-ի N 06/18-14/7557-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N ԱՄ/22.2/3360-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի մանկական համալսարանական հիվանդանոցի պրոֆեսոր Մարկուս Վեյսի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական պարագաները (1 տեղ, 1.74 կգ ընդհանուր քաշով, 100 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 48 շվեյցարական ֆրանկ, ՄՓԵԻՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 323 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-062-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 19-ի N 07/80-2/6441-15 և մարտի 20-ի N 6/3-3/6462-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 30-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծում» ծրագրի մասին» N Մ-062-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2015 թվականի մարտի 10-ին կնքված N 07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փոստաթղթերի փորձաքննություն՝ 220,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**3 ապրիլի 2014 թվականի N Մ- 324 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 19-ի N 07/80-2/6443-15 և մարտի 19-ի N 06/3-3/6422-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Բիդեք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00450801) 2015 թվականի փետրվարի 2-ին կնքված N 15/02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի Հավելվածում նշված շինարարական աշխատանքների իրականացում՝ 1,447,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Բիդեք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00450801) 2015 թվականի հունվարի 29-ին կնքված N 15/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տավուշի մարզի սահմանամերձ Բերքաբեր և Աճարկուտ գյուղերում կատարել 6,100 մետր հողային աշխատանքների իրականացում՝ 8,723,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 325 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N 07/80-2/7312-15 և մարտի 24-ի N 06/3-3/6725-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ (2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1066-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1311-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 01801249) հետ 2015 թվականի մարտի 17-ին կնքված N 03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պահարանների պատրաստում և տեղադրում՝ 464,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 326 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-946-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 19-ի N.07/80-1/6440-15 և մարտի 16-ի N 06/3-3/6030-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-946-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ ու 9-րդ կետերում «62,584,500 դրամ» բառերը փոխարինել «77,218,904 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետում «62,211,500 դրամ» բառերը փոխարինել «76,845,904 դրամ» բառերով.

3) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև 2015 թվականի մարտի 27-ը» բառերը փոխարինել « մինչև 2015 թվականի օգոստոսի 30-ը » բառերով:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 327 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1059-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 31-ի N 07/80-2/7521-15 և մարտի 27-ի N 06/3-3/7300-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-1059-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1274-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-162-Ա և մարտի 13-ի N Մ-241-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 9-րդ կետի 1-ին ենթակետում «26,700,000 դրամ» բառերը փոխարինել «16,700,000 դրամ» բառերով.

2) 10-րդ կետի 1-ին ենթակետում «22,000,000 դրամ» բառերը փոխարինել «12,000,000 դրամ» բառերով.

3) 9-րդ կետի 4-րդ, 10-րդ կետի 5-րդ և 5.1 ենթակետերում «207,000,000 դրամ» բառերը փոխարինել «217,000,000 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 328 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 30 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 2-ի N 07/80-2/7872 -15 և ապրիլի 3-ի N 06/3-3/7948-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի 3-ի N 02/14/3853-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի ապրիլի 1-ի N ՖԲ/ԱնՄ-4/2640-15 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի մարտի.30-ի N 101/104.3.2/1354-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,870,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 30 մանկապարտեզի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի մարտի 23-ին կնքված N ՀՀ-Կ-05/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում նշված մանկապարտեզում՝ 1,870,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«27» մարտի 2015թ.

**« Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 30 մանկապարտեզի մասնակի կահավորում »**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մասամբ ապահովել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 30 մանկապարտեզը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաք, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.870.000,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Վանաձոր քաղաքի թիվ 30 մանկապարտեզը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ մարտի 23-ից մինչև 2015թ. օգոստոսի 23-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն թվականի մարտի 23-ից մինչև օգոստոսի 23-ը ընկած ժամանակահատվածում պատրաստել, գնել, տեղափոխել և անհատույց հանձնել կահույքը՝ 1.870.000,00 դրամ արժողությամբ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՍՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ապրանքատեսակների ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում և անհատույց հանձնում՝1.870.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Լոռու մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և տարեկան հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 329 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՐՁԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ՄԱՐԴԱՏԱՐ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 2-ի N 07/80-2/ 787515 և մարտի 31-ի N 06/3-3/7618-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի 3-ի N 02/14/3897-15 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի մարտի 31-ի N 01/12.2/1565-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 7,500,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի համար մարդատար միկրոավտոբուսի ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սպեցմաշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06947049) 2015 թվականի մարտի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ԳԱԶ-3221 մակնիշի միկրոավտոբուսի ձեռքբերում՝ 7,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«08» ապրիլի 2015թ.

**« Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի համար մարդատար միկրոավտոբուսի ձեռքբերում »**

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան համայնքը մարդատար միկրոավտոբուսով գյուղացիների հետևյալ կարիքները հոգալու համար.<br>-բուժկետի սպասարկում՝ բուժաշխատողների այցերի կազմակերպում, հիվանդների տեղափոխում այլ բուժհաստատություններ, դեղորայքի տեղափոխում և այլն<br>-դպրոցի սպասարկում՝ աշակերտների տեղափոխում այլ համայնքների այցերի և միջոցառումներին մասնակցելու համար, էքսկուրսիաների կազմակերպում և այլն |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղ, սոցիալական բնագավառ |



| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 7.500.000,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Խաչարձան գյուղի համայնքը: Կառուցվածքային փոփոխությունների դեպքում՝ համապատասխան իրավահաջորդը /օտարման և չնախատեսված նպատակներով օգտագործումը սահմանափակող նվիրաբերության պայմանագրի հիման վրա/ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ մարտի 26-ից մինչև 2015թ. օգոստոսի 26-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն թվականի մարտի 26-ից մինչև օգոստոսի 26-ը ընկած ժամանակահատվածում գնել և անհատույց հանձնել Խաչարձան գյուղի համայնքին մարդատար միկրոավտոբուս՝ 7.500.000,00 դրամ արժողությամբ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՍՊԵՑՍԱՇ» ՍՊԸ-ից ԳԱԶ-3221 մակնիշի մարդատար միկրոավտոբուսի ձեռքբերում և անհատույց հանձնում՝ 7.500.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հունիսի 2015 թվականի N Մ - 330 - Ա**
**(Ուրոշումն ընդունվել է 2015 թվականի ապրիլի 3-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 31-ի N 07/80-2/7564-15 և մարտի 27-ի N 06/3-3/7310-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N 02/14/3560-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 10,000,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հիշում եմ և պահանջում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն՝ այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

*«Հայաստան» համահայկական հիմնադրամի*
*Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների տնօրինություն*

Արման Ծառուկյան
«16» մարտի 2015թ.

## «Հիշում եմ և պահանջում»
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչման 100-րդ տարելիցի համատեքստում համայն աշխարհի՝ քաղաքական, կրոնական, հասարակական, մշակութային, գիտական և այլ շրջանակների առաջնորդներին ներկայացնելու մարդկության դեմ գործված 20-րդ դարասկզբի առաջին ոճրագործությունը, սրանով իսկ նպաստելով Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման խնդիրների հանրայնացմանը և միջազգայնացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ (ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նվիրատվություններ և հանգանակություններ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Արտերկիր, գիտա-կրթական, մշակութային բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 10.000.000.000,00 (տասը միլիարդ) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Համայն հայություն: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հունվարի 01-ից |

| | | |
|---|---|---|
| | | մինչև դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ հունվարի 01-ից մինչև 2016թ. հունվարի 01-ը ընկած ժամանակահատվածում հաշվետու բնույթի, գովազդային, տեղեկատվական և քարոզչական նյութերի նկարահանում, տպագրություն, տարածում (առաքում), տեղադրում, ցուցադրում, ցուցահանդեսների, համերգների, ներկայացումների շնորհանդեսների կազմակերպում, բեռների ներկրում, պատվիրակությունների հյուրընկալում և այլ գործարքների իրականացում՝ 10.000.000.000,00 (տասը միլիարդ) ՀՀ դրամ մոտավոր արժողությամբ:<br>Այս ծրագրի շրջանակներում ս. թ. ապրիլի 22-ից մինչև 24-ը ՀՀ-ում տեղի կունենան միջոցառումների շարք նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջազգայնացմանը և զոհերի հիշատակի ոգեկոչմանը՝ մասնավորապես «Սրբադասում Մայր Աթոռ սուրբ էջմիածնի բաց խորանում», «SOAD» ռոք խմբի համերգ «Արթնացրեք հոգիները», Ջահերով երթ, Ընդդեմ Ցեղասպանության հանցագործության միջազգային հասարակական քաղաքական համաժողով, Հարգանքի տուրք և անմեղ զոհերի հիշատակի ոգեկոչման արարողություն Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում - այս միջոցառումների հավուր պատշաճի անցկացման և կազմակերպման համար ձեռք են բերվել, տեխնիկական միջոցներ, կառուցվել են բեմահարթակներ, ձեռք են բերվել ձայնային, լուսային տեխնիկա, բեմային ձևավորման պարագաներ, կազմակերպչական այլ միջոցներ, մատուցվել են տրանսպորտային, բեռնափոխադրման ծառայություններ, հյուրանոցային կեցության ծառայություններ և այլն: Վեր նշված միջոցառումների իրականացման ընթացքում ձեռք բերված ապրանքների և մատուցված ծառայությունների բարեգործական նպատակներով իրականացման վերաբերյալ որոշման համար նախատեսված ծրագրային մասի ընդհանուր նախահաշիվը կազմում է |



| | | |
|---|---|---|
| | | 570.500.000,00 (յոթ հարյուր վաթսունյոթ միլիոն) ՀՀ դրամ<br>Տարվա ընթացքում իրականացվող այլ միջոցառումների, ներմուծվող և ձեռքբերվող ապրանքների վերաբերյալ կներկայացվեն լրացուցիչ հայտեր: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | **Նախատեսվում** է հաշվետու բնույթի, գովազդային, տեղեկատվական և քարոզչական նյութերի նկարահանում, տպագրություն, տարածում (առաքում), տեղադրում, ցուցադրում, ցուցահանդեսների, համերգների, ներկայացումների կազմակերպում, բեռների ներկրում, պատվիրակությունների հյուրընկալում և այլ գործարքներ նվիրված Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի հանրայնացմանը և միջազգայնացման միջոցառումների պատշաճ իրականացմանը՝ 10.000.000.000,00 (տասը միլիարդ) ՀՀ դրամ մոտավոր արժեքով:<br>Հյուրանոցային ծառայություններ, կեցություն – 90.000.000,00 (իննսուն միլիոն) ՀՀ դրամ,<br>Սննդի մատուցման ծառայություններ – 60.000.000,00 (Վաթսուն միլիոն) ՀՀ դրամ<br>Բեմի ձևավորում, բեմահարթակի կառուցում և տեխնիկական բնույթի այլ ծառայություններ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում – 47.000.000,00 (քառասունյոթ միլիոն) ՀՀ դրամ<br>Հեռարձակման ծառայություններ – 65.000.000,00 (վաթսունհինգ միլիոն) ՀՀ դրամ<br>Տպագրական ծառայություններ 39.000.000,00 (երեսունինը միլիոն) ՀՀ դրամ<br>Անվտանգության ծառայությունների մատուցում միջոցառումների ընթացքում – 3.500.000,00 (Երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ Դրամ<br>Բեմի պատրաստում, տեխնիկական սպասարկման ծառայություններ |

| | | |
|---|---|---|
| | | SOAD խմբի համերգի պատրաստման համար – 273.000.000,00 (երկու հարյուր յոթանասուներեք միլիոն) ՀՀ դրամ<br>Տեխնիկական սպասարկում Ընդդեմ Ցեղասպանության հանցագործության միջազգային հասարակական քաղաքական համաժողովի կազմակերպման համար- 173.000.000,00 (մեկ հարյուր յոթանասուներեք միլիոն) ՀՀ դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն համապատասխան նախարարությունների, դեսպանությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, գործակալությունների և այլ ՀԳ մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության գնահատման վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության գնահատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացնող գերատեսչության ղեկավար

Սարգիս Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 331 -Ա**

**քաղ. Երևան**

**«ՖՈՔԸՍ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՈՒ, ԻՆԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՉՈՐԱԹԱՆ ԳՅՈՒՂԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 31-ի N 07/80-2/7566-15 և մարտի 27-ի N .06/3-3/7299-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մարտի 30-ի N 02/14/3576-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մարտի 27-ի ՖԲ/ԱնՄ-4/2513-15 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի մարտի 26-ի N 01/21.1/1388-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Վ. Համբարձումյան 2/37, ՀՎՀՀ՝ 00130776) իրականացվող՝ 828,000 դրամ արժողությամբ «Մանկական խաղահրապարակ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Չորաթան գյուղին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2015 թվականի մարտի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տավուշի մարզի Չորաթան գյուղի համար խաղահրապարակի պատրաստում և տեղադրում՝ 828,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

՛՛Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.՛՛ԲԿ Հայաստանյան. մնճ. կազմակերպության

Տն՝Անահիտ Քալանթարյանի կողմից

«13» 03 2015.թ.

Մանկական խաղահրապարակՉորաթան գյուղին
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մանկական խաղահրապարակի տեղադրում սահմանամերձ գյուղում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ՛՛Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.՛՛ Բարեգործական Կազմակերպություն, 6850 Քենդի պողոտա, սենյակ 102,Ռեսեդա,Կալիֆորնիա 91355,Լոս Անջելես |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՛՛Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.՛՛ԲԿ Հայաստանյան մնճ.,ք.Երևան,Վ.Համբարձումյան 2շ,37 բն, ՀՎՀՀ 00130776 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Տավուշի մրզ,Չորաթան գյուղի մանկապարտեզ, սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Iեռ. 2015թ, 828.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Չորաթան գյուղի համայնք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.04.2015թ – 15.06.2015թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1փուլ .01.04.2015թ.-10.04.2015թ.խաղահրապարակի տարածքի հարթեցում համայնքի կամավորների ուժերով, խաղային սարքերի պատվիրում և պատրաստում,բյուջե-828.000 դրամ<br>2 փուլ 11.04.2015թ-16.04.2015թ. սարքերի տեղադրում,<br>3 փուլ 18.04.2015թ. խաղահրապարակի հանձնումը համայնքին: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ճոճանակ 1 հատ-43.000 դրամ, պտույտ 1 հատ-268.000 դրամ, սղարան Աստրա 1 հատ – 429.000 դրամ,փոքրիկ մարզիկ 1 հատ – |



| | | |
|---|---|---|
| | | 88.000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով կներկայացվի հաշվետվություն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ծրագրի ընթացքի և վերջնական իրականացման վերաբերյալ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**9 ապրիլի 2015 թվականի N Մ - 332 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի ապրիլի 3-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 8-ի N 07/80-2/8416-15 և ապրիլի 9-ի N 06/5-1/8445-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի ապրիլի 7-ի N ԱՄ/22.2/3786-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամերիկյան մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքի (1 տեղ, 32 կգ ընդհանուր քաշով, 1,214.42 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ 200 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռն անհատույց հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Աշան համայնքի բուժկետին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 333 - Ա**
**քաղ. Երևան**

### «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 3-ի N 07/80-2/7911-15 և ապրիլի 3-ի N 06/5-1/8045-15 ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի ապրիլի 3-ի N 03/07-1/3525 -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված դպրոցական պարագաների (34 տեղ, 19,280 կգ ընդհանուր քաշով, 209,386.39 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ 7,670 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարտյան» տարածաշրջնային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռն անհատույց բաշխվելու է Հայաստանի Հանրապետության դպրոցների միջև:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**7 ապրիլի 2015 թվականի N Մ- 334 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի ապրիլի 3-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 7-ի N 07/80-2/8128-15 և ապրիլի 3-ի N 6/5-1/7989-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված ձայնային համակարգի ապրանքները (13 կգ ընդհանուր քաշով, 4,165 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, այդ թվում 880 ԱՄՆ-ի դոլար բեռնափոխադրման ծախսերը, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (4-րդ փուլ) ծրագրի մասին» N Մ-293-Ա որոշմամբ (2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1066-Ա և դեկտեմբերի 26-ի N Մ-1311-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**3 ապրիլի 2015 թվականի N Մ - 335 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1059-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 30-ի N 07/80-2/7513-15 և մարտի 31-ի N 06/3-3/7632-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 23-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-1059-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1274-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-162-Ա և 2015 թվականի մարտի 13-ի N Մ-241-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գիզա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00851914) 2015 թվականի մարտի 23-ին կնքված N 10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամեկուսացման և գոլորշամեկուսացման աշխատանքների իրականացում՝ 22,405,143 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**7 ապրիլի 2015 թվականի N Մ - 336 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի ապրիլի 3-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1059-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 7-ի N 07/80-2/8126-15 և ապրիլի 2-ի N 06/3-3/7865-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 23-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-1059-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1274-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-162-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-241-Ա և 2015 թվականի ապրիլի 3-ի N Մ- -Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԴԵՄԵՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00851914) 2015 թվականի մարտի 25-ին կնքված N 11/Մ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բազալտե սալիկների մատակարարում՝ 5,320,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու[illegible]

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ- 337 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 1-ի N 07/80-2/7710-15 և ապրիլի 2-ի N 06/3-3/7864-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ 00804091) կնքված՝ ստորև նշված փոխանցման հաշվով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա (2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1302-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Մարեկս» մասնավոր ձեռնարկության հետ (03179 Ուկարաինա, Կիև, Ուշակովի 8-Ա/1, ՀՎՀՀ՝ 31168055) 2015 թվականի փետրվարի 10-ին կնքված N ԵԿԱ-ԲԸԸՀԱՇՁԲ-15/04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի կենդանաբանական այգում հաշմանդամ երեխաների համար խաղահրապարակի ստեղծում՝ 15,000 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետարանին:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 ապրիլի 2015 թվականի N Մ-338-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 26-ի N 07/80-2/7144-15 և մարտի 23-ի N 06/3-3/6553-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մարտի 24-ի N 02/14/3322-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մարտի 23-ի N ՖԲ/ԱՆՄ-4/2349-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 1,784,145 դրամ ընդհանուր արժեքով «Բնակելի տան մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2015 թվականի փետրվարի 23-ին կնքված՝ N 090215 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Սարի թաղի 19-րդ փողոցի 16 տան սանհանգույցի կառուցման աշխատանքների իրականացում՝ 1,784,145 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

**Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է**
«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից

«6»-ը մարտի 2015թ.

**«Բնակելի տան մասնակի վերանորոգում»**
**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ք. Երևան, Սարի թաղ, 19-րդ փողոց, թիվ 16 բնակելի տան սանհանգույցի կառուցում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (հասցե՝ Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե CH 5712, Ֆելդշտրասսե 9) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան՝ սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,784,145 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Սոցիալապես անապահով ընտանիք՝ Սահակյան Լենա (անձնագիր՝ AH0505449, տրվ. 04.10.2007թ. 009 կողմից, հեռ. 55.83.96) |

4/8

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 թվականի փետրվարի 23-ից մինչև 2015 թվականի սեպտեմբերի 1-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015 թվականի փետրվարի 23-ից մինչև 2015թ. թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում բնակելի տան սանհանգույցի կառուցում՝ 1,748,145 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակելի տան սանհանգույցի կառուցման պայմանագիր, որի արժեքը կազմում է 1,748,145 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվությունների ներկայացում Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց ՝ տնօրենի տեղակալ Վահե Ավագյան
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ-339-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 19-ի N 07/80-2/6442-15 և մարտի 20-ի N 06/18-4/6463-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 19-ի N ԱՄ/22.2/2988-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Ameri Cares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (27 տեղ, 6,857.6 կգ ընդհանուր քաշով, 592,400.78 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,209 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ-340-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 30-ի N 07/80-2/7367-15 և մարտի 31-ի N 06/5-1/7532-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N ԱՄ/22.2/ 3359-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Ameri Cares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (3 տեղ (219 տուփ), 645.1 կգ ընդհանուր քաշով, 1,450,232.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,232.36 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# ՈՐՈՇՈՒՄ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ-341-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՊՐՈՖ. Ռ. Հ. ՅՈԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N 07/80-2/7313-15 և մարտի 27-ի N 06/5-1/7307-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մարտի 30-ի N ԱՄ/22.2/ 3373-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հեմոֆիլիայի համաշխարհային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված արյան մակարդման VIII գործոն պատրաստուկի (415 սրվակ՝ 3 տեղ, 40.5 կգ ընդհանուր քաշով, 20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 342,100 դրամ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆ.Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ-342-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 23-ի N 07/80-2/6699-15 և մարտի 27-ի N 06/5-1/6464-15 ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի մարտի 20-ի N 03/07-1/2924-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «ARPA Institute» ոչ առևտրային կազմակերպության կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (մեկ տեղ, 310.45 գրամ զուտ քաշով, 5,322.35 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 90 եվրո փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Կցորդ 1

| Թիվ | No. | Իր(եր)ի անվանումը | Արտադրող երկիր | Քանակ (հատ) | Միավորի արժեք (EUR) | Ընդհանուր արժեք (EUR) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | BDB-110 | BrightDye Terminator 5x sequencing 28ML (BrightDye տերմինատոր 28մլ) | US (ԱՄՆ) | 2 | 318.75 | 637.50 |
| 2 | NP7-101 | NanoPOP-7 10ML (պոլիմեր, 10մլ) | US (ԱՄՆ) | 2 | 165.50 | 333.00 |
| 3 | NPB-100 | NanoPOP 10x running buffer, 100ML (պոլիմերի լուծույթ, 100մլ) | US (ԱՄՆ) | 2 | 88.00 | 176.00 |
| 4 | SDI-100 | Super-DI Formamide 25ml (ֆորմամիդ, 25մլ ) | US (ԱՄՆ) | 2 | 37.00 | 74.00 |
| 5 | DP005 | D-Pure kit 5 ml (սեքվենավորման մաքրման հավաքածու, 5մլ ) | US (ԱՄՆ) | 2 | 175.50 | 351.00 |
| 6 | AP005 | AmpiClean PCR Cleanup Beads solution 5ml (ՊՇՌ մաքրման լուծույթ, 5մլ ) | US (ԱՄՆ) | 2 | 51.30 | 102.60 |
| 7 | BDT3-100 | BrightDye Term Cycle Seq 100rxn (սեքվենավորման հավաքածու 100 փորձի համար) | US (ԱՄՆ) | 5 | 668.25 | 3341.25 |
| 8 | MP-012 | 12-Wells Magnet Plate (մագնիսական բրնակ) | US (ԱՄՆ) | 1 | 202.50 | 202.50 |
| 9 | B | Articles (Հոդվածներ) | US (ԱՄՆ) | 18 | 0 | 0 |
| | | | | | | |
| | | | | | Ընդամենը | 5217,85 |
| | | | Dry ice(Չոր սառույց) /փաթեթավորում/ | | | 14.50 |
| | | | | | Ճանապարհածախս | 90,00 |
| | | | | | ԸՆԴԱՄԵՆԸ | 5322.35 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ-343-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁՅՈՒԴՈՅԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱ-ԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 30-ի N 07/80-2/7370-15 և մարտի 30-ի N 06/5-1/7483-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի մարտի 27-ի N 1/06/400-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ձյուդոյի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված ձյուդոյի մարզահագուստի (50 հատ՝ 6 տեղ, 152 կգ ընդհանուր քաշով, 5,932 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 982 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 ապրիլի 2015 թվականի N Մ-344-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 18-ի N 07/80-2/6316-15 և մարտի 19-ի N 06/5-1/6427-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի մարտի 20-ի N 1/06/361-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

